Այսպէս այդ կենդանի պատգարակներով հասանք նաւակին, որը մեզ շոգենաւ փոխադրեց:

Շոգենաւը շատ փոքր էր, եւ այն էլ ամբողջապէս բռնուած էր մեքենայով, ուղեւորների համար կար մի փոքրիկ խցիկ միայն:

Այս խցիկում էլ խռնուեցինք մինչեւ Օբամա, որ երկու-երեք ժամւայ ճամփայ է:

Մօտենալիս, Օբաման ծովի կողմից շատ գեղեցիկ է: Ափը ժայռոտ. սեպ ու խիստ բարձր:

Տները կարծես կախուած լինեն օդի մէջ անդնդի գլխին ու նայելիս ներքեւ, որտեղ ծովը անընդհատ քծնում է, մռնչում ու փրփրում:

Այստեղից ուղին շարունակ բարձրանում է մինչեւ Ունզէնը, եւ այնպէս ցից, որ ջինրիկիշաները տանել չեն կարող: Հաղորդակցութիւնը կատարւում է պատգարակներով, եւ այս անգամ արդէն իսկական պատգարակներով:

Մտանք հիւրանոց նախաճաշելու, թէեւ դա բաւական բարդ գործ դարձաւ: Եւրոպացիների գալը բոլորովին անակընկալ էր. եւ մեր սիրուն տանտիրուհին ուղղակի չը գիտէր՝ մեզ ինչ առաջարկի: Իսկ մենք խիստ անօթի էինք եւ լաւ ախորժակ ունէինք մի հիւթալի խորոված:

Սակայն ամբողջ գիւղում միս գտնել անկարելի եղաւ, եւ մենք ճարահատուած ստիպուած եղանք մի կերպ բաւականանալու ձուով եւ բանջարեղէնով:

Այդ միջոցին դուրսը խռնուել էին արդէն պատգարակ կրողները, ու ամեն-ինչ պատրաստ էր մեր ճամփան շարունակելու:

Եւրոպացուն յատկացրած պատգարակը պարզապէս մի